# Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն № 3

*/հայտերի գնահատման և հաստատման նիստի/*

«*ՄՀ-ԳՀԱՊՁԲ-19/18*» գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

Գ. Մայիսյան

26 Հուլիսի 2019թ
ժամը 12:00

*ՀՀ Շիրակի մարզ Մարմաշեն համայնքապետարան գյուղ Մայիսյան, փողոց 1, շենք 29 հասցեում*

Մասնակցում էին

Հանձնաժողովի նախագահ՝ Արփինե Կարապետյան /Մարմաշենի համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար/

Հանձնաժողովի Անդամներ՝ Մամեդ Սալոյան / Մարմաշենի համայնքապետարանի աշխատակազմի աշխատակից /

Արտաշ Եղիկյան /Մարմաշենի համայնքապետարանի աշխատակազմի գլխավոր մասնագետ/

Թերեզա Մինասյան //Մարմաշենի համայնքապետարանի աշխատակազմի առաջատար մասնագետ/

Հանձնաժողովի քարտուղար՝ Սաթենիկ Մաղաքյան /*Մարմաշենի համայնքապետարանի աշխատակազմի աշխատակից/*

## *1. Հրավերով նախատեսված՝ որակավորման չափանիշներին համապատասխանությունը հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերի (տեղեկությունների) գնահատման մասին*

*1. Ընդունել ի գիտություն, որ*

1.1 «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» ՀՀ Կառավարության 526-Ն որոշմամբ հաստատված կարգի 43-րդ կետի 3-րդ ենթակետի՝ ՀՀ կառավարությանմ առընթեր պետական եկամուտների կոմիտեի կողմից տրամադրվել է եզրակացություն առաջին տեղ զբաղեցրած մասնակցի՝ Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի նկատմամբ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ժամկետանց հարկային պարտավորությունների, ինչպես <<Ֆինանսական միջոցներ>> որակավորման չափանիշին վերաբերող որակավորման պահանջի առկայության վերաբերյալ:

1.2 Համաձայն վերը նշված եզրակացության առաջին տեղը զբաղեցրած մասնակիցները՝

- Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի նկատմամբ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ժամկետանց հարկային պարտավորություններ չունի
- հայտը ներկայացվելու նախորդող երեք հաշվետու տարիների համախառն եկամտի հանրագումարը պակաս չէ ներկայացված գնային առաջարկից,

- հայտը ներկայացնելուն նախորդ հաշվ... տարվա ընթացքում պարտավորությունների հաշվեկշռային արժեքը չի գերազանցել ակտիվների հաշվեկշռային արժեքը:

«*ՄՀ-ԳՀԱՊՁԲ-19/18*» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի Առաջին տեղ զբաղեցրած մասնակցի կողմից սահմանված ժամկետում ներկայացրել է որակավորման պահանջներին իր համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերը:

*Ընդունվել է որոշում՝ կողմ-4, դեմ-0*

2. *Գնանշման հարցման ընթացակարգի հայտերի գնահատման արդյունքների հաստատման և ընտրված մասնակցի որոշման մասին*

Հիմք ընդունելով գնահատող հանձնաժողովի անդամների կողմից իրականացված գնահատման արդյունքները հանձնաժողովը որոշեց՝ հաստատել գնանշման հարցման ընթացակարգի առաջին տեղ զբաղեցրած մասնակցի գնահատման արդյունքները:

| Հ/Հ | Մասնակիցը | Հայտի գնահատականը |
|---|---|---|
| | | |
| 1 | «ՄՄՍ Գրուպ» ՍՊԸ | բավարար |

Մասնակիցը ներկայացրել է որակավորման չափանիշները հիմնավորող իրավերով նախատեսված բոլոր փաստաթղթերը:

Հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 34-րդ հոդվածի 5-րդ կետը՝ «*ՄՀ-ԳՀԱՊՁԲ-19/18*» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի **ընտրված մասնակից** հայտարարել՝

1-6, 12-16,19-28 չափաբաժինների մասով «ՄՄՍ Գրուպ» ՍՊԸ –ին,

*Ընդունվել է որոշում՝ կողմ 4, դեմ-0*

1. *Պայմանագիր կնքելու որոշումը և անգործության ժամկետը հաստատելու մասին*

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն Պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարությունը հրապարակել տեղեկագրում, «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 4-րդ կետի համաձայն անգործության ժամկետը կիրառելի չէ, եթե միայն մեկ մասնակից է հայտ ներկայացրել, որի հետ կնքվում է պայմանագիր:

*Ընդունվել է որոշում՝ կողմ-4, դեմ-0:*

բ) Ինչպես նաև էլեկտրոնային եղանակով Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե հարցում է ներկայացվում Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի նկատմամբ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ժամկետանց հարկային պարտավորությունների վերաբերյալ: Ստացված բացասական եզրակացության դեպքում Մասնակցի հայտը ենթակա է մերժման:

Հանձնաժողովը որոշեց *«ՄՀ-ԳՀԱՊՁԲ-19/18»* ծածկագրով գնանշման հարցման միջոցով ընթացակարգի փաստաթղթերի գնահատման արդյունքների հաստատման նիստը հրավիրել ոչ ուշ, քան կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի կողմից եզրակացության տրամադրման և առաջին տեղը զբաղեցնող մասնակցի որակավորման չափանիշները հիմնավորող հրավերով նախատեսված փաստաթղթերը հանձնաժողովի անդամներին տրամադրելուն հաջորդող օրը ժամը՝ 12:00-ին, ՀՀ Շիրակի մարզ Մարմաշեն համայնքապետարան, գյուղ Մայիսյան, փողոց 1, շենք 29 հասցեում:

Ընդունվել է որոշում՝ կողմ – 3 դեմ – 0:

Հանձնաժողովի
Նախագահ՝ ________ Արփինե Կարապետյան
/ստորագրություն

Հանձնաժողովի
անդամ՝ ________ Մամեդ Սալոյան
/ստորագրություն

Հանձնաժողովի
անդամ՝ ________ Թերեզա Մինասյան
/ստորագրություն

Հանձնաժողովի
Անդամ՝ ________ Արտաշ Եղիկյան
/ստորագրություն

Հանձնաժողովի
Քարտուղար՝ ________ Սաթենիկ Մաղաքյան
/ստորագրություն